	3) 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար	*7 000 000 (յոթ միլիոն)*	*7 000 000 (յոթ միլիոն)*	*7 000 000 (յոթ միլիոն)*	*7 000 000 (յոթ միլիոն)*	*7 000 000 (յոթ միլիոն)*	*7 000 000 (յոթ միլիոն)*	*7 000 000 (յոթ միլիոն)*	*7 000 000 (յոթ միլիոն)*	*7 000 000 (յոթ միլիոն)*	*7 000 000 (յոթ միլիոն)*	*7 000 000 (յոթ միլիոն)*	*7 000 000 (յոթ միլիոն)*
	4) 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար	*10 000 000 (տասը միլիոն)*	*10 000 000 (տասը միլիոն)*	*10 000 000 (տասը միլիոն)*	*10 000 000 (տասը միլիոն)*	*10 000 000 (տասը միլիոն)*	*10 000 000 (տասը միլիոն)*	*10 000 000 (տասը միլիոն)*	*10 000 000 (տասը միլիոն)*	*10 000 000 (տասը միլիոն)*	*10 000 000 (տասը միլիոն)*	*10 000 000 (տասը միլիոն)*	*10 000 000 (տասը միլիոն)*
19.	Համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար	*50 000 (հիսուն հազար)*	*50 000 (հիսուն հազար)*	*50 000 (հիսուն հազար)*	*50 000 (հիսուն հազար)*	*50 000 (հիսուն հազար)*	*50 000 (հիսուն հազար)*	*50 000 (հիսուն հազար)*	*50 000 (հիսուն հազար)*	*50 000 (հիսուն հազար)*	*50 000 (հիսուն հազար)*	*50 000 (հիսուն հազար)*	*50 000 (հիսուն հազար)*
20.	Համայնքի վարչական տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝												
	1)կարաոկե, դիսկոտեկ, բաղնիք, շոգեբաղնիք, սաունա, մերսման սրահ (բացառությամբ բուժական մերսման սրահների).	*20 000 (քսան հազար)*	*20 000 (քսան հազար)*	*15 000 (տասնհինգ հազար) (կիրառվել է 0.75 գործակից)*	*15 000 (տասնհինգ հազար) (կիրառվել է 0.75 գործակից)*	*15 000 (տասնհինգ հազար) (կիրառվել է 0.75 գործակից)*	*15 000 (տասնհինգ հազար) (կիրառվել է 0.75 գործակից)*	*15 000 (տասնհինգ հազար) (կիրառվել է 0.75 գործակից)*	*15 000 (տասնհինգ հազար) (կիրառվել է 0.75 գործակից)*	*20 000 (քսան հազար)*	*20 000 (քսան հազար)*	*15 000 (տասնհինգ հազար) (կիրառվել է 0.75 գործակից)*	*15 000 (տասնհինգ հազար) (կիրառվել է 0.75 գործակից)*
	2) հեստապարային ակումբի համար	*200 000 (երկու հարյուր հազար)*	*200 000 (երկու հարյուր հազար)*	*150 000 (հարյուր հիսուն հազար) (կիրառվել է 0.75 գործակից)*	*100 000 (հարյուր հազար) (կիրառվել է 0.5 գործակից)*	*100 000 (հարյուր հազար) (կիրառվել է 0.5 գործակից)*	*100 000 (հարյուր հազար) (կիրառվել է 0.5 գործակից)*	*100 000 (հարյուր հազար) (կիրառվել է 0.5 գործակից)*	*100 000 (հարյուր հազար) (կիրառվել է 0.5 գործակից)*	*200 000 (երկու հարյուր հազար)*	*150 000 (հարյուր հիսուն հազար) (կիրառվել է 0.75 գործակից)*	*100 000 (հարյուր հազար) (կիրառվել է 0.5 գործակից)*	*100 000 (հարյուր հազար) (կիրառվել է 0.5 գործակից)*

Հ/Հ	Տեղական տուրքերի տեսակները	Աբովյան համայնք	Գոտիավորում ըստ բնակավայրերի										
			Աբովյան քաղաք	Առինջ գյուղ	Արամուս գյուղ	Բալահովիտ գյուղ	Գեղաշեն գյուղ	Կաթնաղբյուր գյուղ	Կամարիս գյուղ	Մայակովսկի գյուղ	Պտղնի գյուղ	Գետարգել գյուղ	Վերին Պտղնի գյուղ
21.	Համայնքի տարածքում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց՝ տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային (մայիսի 1-ից հոկտեմբերի 31-ը ներառյալ) սեզոնին հանրային սննդի ծառայության կազմակերպման թույլտվության համար՝ մեկ քառակուսի մետրի համար :	*10 000 (տասը հազար)*	*10 000 (տասը հազար)*	*10 000 (տասը հազար)*	*10 000 (տասը հազար)*	*10 000 (տասը հազար)*	*10 000 (տասը հազար)*	*10 000 (տասը հազար)*	*10 000 (տասը հազար)*	*10 000 (տասը հազար)*	*10 000 (տասը հազար)*	*10 000 (տասը հազար)*	*10 000 (տասը հազար)*
22.	Համայնքի տարածքում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց՝ տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ձմեռային (նոյեմբերի 1-ից ապրիլի 30-ը ներառյալ) սեզոնին հանրային սննդի ծառայության կազմակերպման թույլտվության համար՝ մեկ քառակուսի մետրի համար	*10 000 (տասը հազար)*	*10 000 (տասը հազար)*	*10 000 (տասը հազար)*	*10 000 (տասը հազար)*	*10 000 (տասը հազար)*	*10 000 (տասը հազար)*	*10 000 (տասը հազար)*	*10 000 (տասը հազար)*	*10 000 (տասը հազար)*	*10 000 (տասը հազար)*	*10 000 (տասը հազար)*	*10 000 (տասը հազար)*

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 փետրվարի 2023 թվականի N 09-Ա

ԱԲՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԴԻՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է***.

1. Դիմել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2022 թվականի փետրվարի 23-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու մասին» N 336-Ա հրամանով հաստատված անվանացանկում հետևյալ լրացումները կատարելու համար՝

1) համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի 2-րդ ենթախումբը լրացնել նոր 4-րդ՝ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետի տեղակալ» (ծածկագիր՝ 2.2-4) կետով.

2) համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի 3-րդ ենթախումբը լրացնել նոր 21-րդ՝ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության և քաղաքացիների սպասարկման բաժնի գլխավոր մասնագետ» (ծածկագիր՝ 2.3-21), 22-րդ՝ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և գնումներ բաժնի գլխավոր մասնագետ» (ծածկագիր՝ 2.3-22), 23-րդ՝ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինարարության, գյուղատնտեսության և անշարժ գույքի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ» (ծածկագիր՝ 2.3-23) և 24-րդ՝ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի առևտրի, սպասարկման, տրանսպորտի և գովազդի բաժնի գլխավոր մասնագետ» (ծածկագիր՝ 2.3-24) կետերով.

3) համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների խմբի առաջին ենթախումբը լրացնել նոր 33-րդ՝ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջատար մասնագետ» (ծածկագիր՝ 3.1-33) կետով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -21 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵԴԱ

ԱՐՋՈՒՄԱՆՅԱՆ ՌԱՋՄԻԿ

ԲԱԲԱՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ

ԳԱԼՍՏՅԱՆ ԳՈՌ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ՄԵԼԻՆԵ

ԳԵՂԱՄՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԶԱՐԳԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ԶԱՐՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԹԵՆԵՔԵՋՅԱՆ ԱՆԻ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԷԴՎԻՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱԻՐԻ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԵ

ՄԵԼԻՔՅԱՆ ՆԱԻՐԱ

ՄԵՂՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՍՊՈՒՐԱԿ

ՊՈՂՈՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՔՈՍԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Է. ԲԱԲԱՅԱՆ**

2023թ. փետրվարի 16
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 փետրվարի 2023 թվականի N 10-Ա

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 197-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-Ի N 144-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ և 38.1-րդ հոդվածների և հիմք ընդունելով Կոտայքի մարզպետի 2022 թվականի դեկտեմբերի 22-ի N 01/08.1/07691-2022 գրությունը (մուտք՝ 2022 թվականի դեկտեմբերի 23-ի N Պ-1931) և Աբովյան համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 16-ի N 09-Ա որոշումը, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է***՝

1. Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 197-Ա որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Չեղյալ ճանաչել Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 17-ի «Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 08-ի N 05-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 144-Ա որոշումը:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հրամանն ուժի մեջ մտնելու պահից:

Կողմ -20 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵԴԱ

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԲԱԲԱՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ՄԵԼԻՆԵ

ԳԵՂԱՄՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՋԱՐԳԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՋԱՐՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԹԵՆԵՔԵՋՅԱՆ ԱՆԻ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԷԴՎԻՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱԻՐԻ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԵ

ՄԵԼԻՔՅԱՆ ՆԱԻՐԱ

ՄԵՂՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՍՊՈՒՐԱԿ

ՊՈՂՈՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՔՈՍԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Է. ԲԱԲԱՅԱՆ**

2023թ. փետրվարի 16
ք. Աբովյան

Հավելված
Աբովյան համայնքի ավագանու 2023
թվականի փետրվարի 16-ի N 10-Ա
որոշման
« Հավելված
Աբովյան համայնքի ավագանու 2022
թվականի դեկտեմբերի 28 -ի
N 197- Ա որոշման

ԱԲՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. **Աշխատողների քանակը - 178**
2. **Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝**

Հ/հ	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափն ամսական	Ընդհանուր աշխատավարձի չափը տարեկան
1	2	3	4	5
	ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ			
1	Համայնքի ղեկավար	1	565 000	565 000
2	Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ	1	458 000	458 000
3	Համայնքի ղեկավարի տեղակալ	2	440 000	880 000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**4**		**1 903 000**
	ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ			
4	Համայնքի ղեկավարի խորհրդական	3	420 000	1 260 000
5	Համայնքի ղեկավարի օգնական	3	400 000	1 200 000
6	Համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար	1	410 000	410 000
7	Ավագանու խմբակցության փորձագետ	2	200 000	400 000
8	Համայնքի ղեկավարի առաջին տեղակալի օգնական	1	300 000	300 000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**10**		**3 570 000**
	ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ			
9	Առինջ, Գեղաշեն, Արամուս, Բալահովիտ բնակավայրերի վարչական ղեկավարներ	4	360 000	1 440 000

1	2	3	4	5
10	Կամարիս, Մայակովսկի, Պտղնի բնակավայրերի վարչական ղեկավարներ	3	330 000	990 000
11	Վերին Պտղնի, Գետարգել, Կաթնաղբյուր բնակավայրերի վարչական ղեկավարներ	3	300 000	900 000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**10**		**3 330 000**
	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ			
12	Աշխատակազմի քարտուղար	1	458 000	458 000
	ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԲԱԺԻՆ			
13	Բաժնի պետ	1	410 000	410 000
14	Բաժնի պետի տեղակալ	1	369 000	369 000
15	Գլխավոր մասնագետ	2	332 000	664 000
16	Առաջատար մասնագետ	4	298 000	1 192 000
17	1-ին կարգի մասնագետ	12	268 000	3 216 000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**20**		**5 851 000**
	ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱԺԻՆ			
18	Բաժնի պետ	1	410 000	410 000
19	Բաժնի պետի տեղակալ	1	369 000	369 000
20	Գլխավոր մասնագետ	8	332 000	2 656 000
21	Առաջատար մասնագետ	6	298 000	1 788 000
22	1-ին կարգի մասնագետ	4	268 000	1 072 000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**20**		**6 295 000**
	ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԲԱԺԻՆ			
23	Բաժնի պետ	1	410 000	410 000
24	Գլխավոր մասնագետ	2	332 000	664 000
25	Առաջատար մասնագետ	5	298 000	1 490 000
26	1-ին կարգի մասնագետ	5	268 000	1 340 000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**13**		**3 904 000**

1	2	3	4	5
	ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺԻՆ			
27	Բաժնի պետ	1	410 000	410 000
28	Բաժնի պետի տեղակալ	1	369 000	369 000
29	Գլխավոր մասնագետ	3	332 000	996 000
30	Առաջատար մասնագետ	4	298 000	1 192 000
31	1-ին կարգի մասնագետ	3	268 000	804 000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**12**		**3 771 000**
	ԱՌԵՎՏՐԻ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ, ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԳՈՎԱԶԴԻ ԲԱԺԻՆ			
32	Բաժնի պետ	1	410 000	410 000
33	Բաժնի պետի տեղակալ	1	369 000	369 000
34	Գլխավոր մասնագետ	3	332 000	996 000
35	Առաջատար մասնագետ	3	298 000	894 000
36	1-ին կարգի մասնագետ	3	268 000	804 000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**11**		**3 473 000**
	ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲԱԺԻՆ			
37	Բաժնի պետ	1	410 000	410 000
38	Գլխավոր մասնագետ	3	332 000	996 000
39	Առաջատար մասնագետ	4	298 000	1 192 000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**8**		**2 598 000**
	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ, ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ			
40	Բաժնի պետ	1	410 000	410 000
41	Գլխավոր մասնագետ	1	332 000	332 000
42	Առաջատար մասնագետ	3	298 000	894 000
43	1-ին կարգի մասնագետ	1	268 000	268 000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**6**		**1 904 000**
	ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ, ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԲԱԺԻՆ			

1	2	3	4	5
44	Բաժնի պետ	1	410 000	410 000
45	Գլխավոր մասնագետ	1	332 000	332 000
46	Առաջատար մասնագետ	2	298 000	596 000
47	1-ին կարգի մասնագետ	2	268 000	536 000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**6**		**1 874 000**
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ ԿԱՏԱՐՈՂ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ				
48	Գլխավոր մասնագետ	1	332 000	332 000
49	Առաջատար մասնագետ	2	298 000	596 000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**3**		**928 000**
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԿԱՏԱՐՈՂՆԵՐ				
50	Ֆինանսական փորձագետ	1	369 000	369 000
51	Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի կառավարիչ	1	332 000	332 000
52	Ցանցային օպերատոր	1	298 000	298 000
53	Սպորտային միջոցառումների կազմակերպման և անցկացման պատասխանատու	1	332 000	332 000
54	Քաղաքացիական պաշտպանության գծով աշխատանքներ իրականացնող	1	332 000	332 000
55	Հասարակական կարգի պահպանության գծով աշխատանքներ իրականացնող	1	298 000	298 000
56	Շինարարական աշխատանքների հսկողություն իրականացնող	1	298 000	298 000
57	Անասնաբույժ	4	140 000	560 000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**11**		**2 521 000**
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ				
58	Տնտեսվար - պահեստապետ	1	332 000	332 000
59	Պահեստի հաշվետար	1	298 000	298 000
60	Տեխնիկական սպասարկող	1	241 000	241 000
61	Համակարգչային տեխնիկան սպասարկող	1	298 000	298 000

1	2	3	4	5
62	Վարորդ	1	241 000	241 000
63	Գործավար	4	241 000	964 000
64	Ավագանու խմբակցության գործավար	4	160 000	640 000
65	Հարկահավաք	10	268 000	2 680 000
66	Էլեկտրիկ	1	241 000	241 000
67	Տնտեսական աշխատող	1	214 000	214 000
68	Հավաքարար	6	204 000	1 224 000
69	Բնակավայրի վարչական շենքի հավաքարար	10	100 000	1 000 000
70	Բնակավայրի վարչական շենքի պահակ	2	93 000	186 000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**43**		**8 559 000**
	ԸՆԴԱՄԵՆԸ	**178**		**50 939 000**

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 փետրվարի 2023 թվականի N 11-Ա

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 198-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների և 13-րդ հոդվածի 6-րդ մասի, հիմք ընդունելով Այլընտրանքային ծառայության հարցերով հանրապետական հանձնաժողովի հունվարի 23-ի եզրակացությունը և Արդարադատության նախարարի 2023 թվականի հունվարի 30-ի N 43-Ա հրամանը (մուտք՝ 2023 թվականի փետրվարի 06-ի N Պ-241), Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է***՝

1. Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքային հիմնարկների, համայնքային ենթակայությամբ ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների քանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը 2023 թվականի համար հաստատելու մասին» N 198-Ա որոշմամբ հաստատված հավելված 17-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2023 թվականի փետրվարի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա:

Կողմ -21 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵԴԱ

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԲԱԲԱՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ

ԳԱԼՍՏՅԱՆ ԳՈՌ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ՄԵԼԻՆԵ

ԳԵՂԱՄՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՋԱՐԳԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՋԱՐՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԹԵՆԵՔԵՋՅԱՆ ԱՆԻ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԷԴՎԻՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱԻՐԻ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԵ

ՄԵԼԻՔՅԱՆ ՆԱԻՐԱ

ՄԵՂՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՍՊՈՒՐԱԿ

ՊՈՂՈՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՔՈՍԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Է. ԲԱԲԱՅԱՆ**

2023թ. փետրվարի 16
ք. Աբովյան

Հավելված
Աբովյան համայնքի ավագանու 2023 թվականի
փետրվարի 16-ի N 11-Ա որոշման

«Հավելված 17
Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի
դեկտեմբերի 28-ի N 198 -Ա որոշման

«ԱԲՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատողների քանակը՝ 359

2.Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

h/h	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորները	Դրույքի չափը (դրամ)	Ընդամենը աշխատավարձ (դրամ)
1	2	3	4	5
	ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ			
1	Տնօրեն	1,0	380 000	380 000
2	Փոխտնօրեն	1,0	315 000	315 000
3	Բնակավայրերի կառավարման ղեկավար	1,0	310 000	310 000
4	Գլխավոր հաշվապահ	1,0	280 000	280 000
5	Աբոնենտական աշխատանքները համակարգող գլխավոր մասնագետ	1,0	210 000	210 000
6	Հաշվապահ	1,0	160 000	160 000
7	Հաշվետար	1,0	150 000	150 000
8	Կադրերի տեսուչ	1,0	180 000	180 000
9	Ավագ օպերատոր	1,0	180 000	180 000
10	Օպերատոր	2,0	150 000	300 000
11	Գործավար	1,0	160 000	160 000
12	Պահեստապետ	1,0	200 000	200 000
13	Գնումների մասնագետ	1,0	210 000	210 000
14	Պահակ	4,0	100 000	400 000
15	Հավաքարար	1,0	100 000	100 000
16	Հսկիչ	1,0	140 000	140 000
	Ընդամենը	**20,0**		**3 675 000**
	ՄԵՔԵՆԱ - ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԿԱՅԱՆ			
17	Գլխավոր մասնագետ	1	240 000	240 000
18	Ավագ մասնագետ	1	180 000	180 000
19	Էլեկտրազոդող	2	130 000	260 000
20	Փականագործ	1	130 000	130 000

1	2	3	4	5
21	Ավտոէլեկտրիկ	2	130 000	260 000
22	Կանոնակարգող	1	160 000	160 000
	Ընդամենը	**8**		**1 230 000**
	ՓՈՂՈՑՆԵՐԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՈՒՄ			
23	Գլխավոր մասնագետ	1,0	210 000	210 000
24	Բրիգադիր	2,0	140 000	280 000
25	Հասարակական մաքրության բանվոր	9,0	200 000	1 800 000
26	Սան. մաքրման բանվոր (6750 ք.մ.) (8 ամիս)	20,0	190 000	3 800 000
27	Սան. մաքրման բանվոր (4500 ք.մ.) (8 ամիս)	25,0	130 000	3 250 000
28	Սան. մաքրման բանվոր (3714 ք.մ.) (8ամիս)	10,0	110 000	1 100 000
29	Բանվոր (4 ամիս)	25,0	140 000	3 500 000
30	Վարորդ	3,0	170 000	510 000
31	Տրակտորավար	2,0	170 000	340 000
32	Գրեյդերավար (3 ամիս)	1,0	150 000	150 000
33	Այլընտրանքային աշխատանքային ծառայություն իրականացնող բանվոր	7,0	30 000	210 000
34	Վարորդ-բանվոր	1,0	190 000	190 000
	Ընդամենը	**106,0**		**15 340 000**
	ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ			
35	Գլխավոր մասնագետ	1,0	240 000	240 000
36	Բրիգադիր	1,0	190 000	190 000
37	Վարորդ	1,0	150 000	150 000
38	Բանվոր (4 ամիս)	30,0	140 000	4 200 000
39	Բանվոր (8 ամիս)	55,0	170 000	9 350 000
40	Սղոցավար	3,0	180 000	540 000
41	Կանաչապատման մասնագետ	1,0	210 000	210 000
	Ընդամենը	**92,0**		**14 880 000**
	ՓՈՂՈՑՆԵՐԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ			
42	Գլխավոր մասնագետ	2,0	210 000	420 000
43	Վարորդ (վիշկա մեքենայի)	2,0	180 000	360 000
44	Էլեկտրիկ	3,0	140 000	420 000
	Ընդամենը	**7,0**		**1 200 000**

1	2	3	4	5
	ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ			
45	Գլխավոր մասնագետ	1,0	240 000	240 000
46	Էքսկավատորավար	1,0	170 000	170 000
47	Էլեկտրազոդող	1,0	180 000	180 000
48	Վարորդ	1,0	190 000	190 000
49	Կռունկավար	1,0	220 000	220 000
50	Բանվոր	10,0	170 000	1 700 000
	Ընդամենը	**15,0**		**2 700 000**
	ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ			
51	Վարորդ	6,0	180 000	1 080 000
52	Վարորդ-բանվոր (Կամազ մեքենայի)	10,0	290 000	2 900 000
53	Բանվոր	16,0	200 000	3 200 000
54	Տրակտորավար	1,0	150 000	150 000
55	Աղբահանության հսկիչներ	14,0	130 000	1 820 000
56	Հսկիչ	1,0	100 000	100 000
	Ընդամենը	**48,0**		**9 250 000**
	ՊՈՒՐԱԿԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ			
57	Բանվոր	10,0	170 000	1 700 000
58	Վարորդ	1,0	160 000	160 000
	Ընդամենը	**11,0**		**1 860 000**
	ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐ			
59	Բանվոր /Պտղնի/	1,0	140 000	140 000
60	Վարորդ աղբատար մեքենայի /Վերին Պտղնի/	1,0	180 000	180 000
61	Աղբատար մեքենայի բանվոր /Վերին Պտղնի/	1,0	140 000	140 000
62	Էլեկտրիկ /Վերին Պտղնի, Պտղնի/	1,0	160 000	160 000
63	Հավաքարար /Վերին Պտղնի/	1,0	110 000	110 000
64	Աղբատար մեքենայի վարորդ /Գետարգել/	1,0	220 000	220 000
65	Աղբատար մեքենայի բանվոր /Գետարգել/	1,0	160 000	160 000
66	Բանվոր /Գետարգել/	1,0	140 000	140 000
67	Հսկիչ /Բալահովիտ/	1,0	140 000	140 000
68	Բանվոր աղբատար մեքենայի /Բալահովիտ/	1,0	180 000	180 000
69	Վարորդ աղբատար մեքենայի/Բալահովիտ/	1,0	260 000	260 000
70	Էլեկտրիկ /Բալահովիտ, Գետարգել/	1,0	160 000	160 000
71	Էլեկտրիկ /Մայակովսկի, Կամարիս/	1,0	160 000	160 000
72	Սան. մաքրման բանվոր /Մայակովսկի/	1,0	140 000	140 000

1	2	3	4	5
73	Աղբատար մեքենայի վարորդ /Արամուս/	1,0	260 000	260 000
74	Աղբատար մեքենայի բանվոր /Արամուս/	1,0	180 000	180 000
75	Էլեկտրիկ /Արամուս, Կաթնաղբյուր/	1,0	160 000	160 000
76	Հավաքարար /Արամուս/	1,0	110 000	110 000
77	Վարորդ-բանվոր /Կաթնաղբյուր/	1,0	260 000	260 000
78	Հավաքարար /Կաթնաղբյուր/	1,0	110 000	110 000
79	Կարգավորիչ /խմելու ջրի, կոյուղու/ /Կամարիս/	1,0	195 000	195 000
80	Պահակ Կամարիս/	1,0	120 000	120 000
81	Աղբատար մեքենայի վարորդ /Կամարիս/	1,0	220 000	220 000
82	Աղբատար մեքենայի բանվոր /Կամարիս/	1,0	150 000	150 000
83	Կարգավորիչ /խմելու ջրի, կոյուղու/ /Գեղաշեն/	1,0	210 000	210 000
84	Հսկիչ /խմելու ջրի, հուշարձանի/ /Գեղաշեն/	2,0	120 000	240 000
85	Էլեկտրիկ /Գեղաշեն/	1,0	140 000	140 000
86	Աղբատար մեքենայի բանվոր /Գեղաշեն/	1,0	160 000	160 000
87	Աղբատար մեքենայի վարորդ /Գեղաշեն/	1,0	220 000	220 000
88	Բանվոր	12,0	150 000	1 800 000
89	Հավաքարար	10,0	140 000	1 400 000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**52,0**		**8 225 000**
	ԸՆԴԱՄԵՆԸ	**359,0**		**58 360 000**

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 փետրվարի 2023 թվականի N 12-Ա

«ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՄՈՒՍԻ ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒՅԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱՐԿԸ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՐԱՄՈՒՍ ԳՅՈՒՂԻ ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ, 28-րդ կետերի, 102-րդ հոդվածի 3.2-րդ մասի, «Վարչատարածքային բաժանման մասին» օրենքի հավելված 2-ի 2.6 ցանկի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի, 13-րդ հոդվածի 2-րդ մասի «գ», «դ», «զ» կետերի, հիմք ընդունելով Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 28-ի N 208-Ա որոշման, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. «ՀՀ Կոտայքի մարզի Արամուսի մարզամշակույթային կենտրոն» հիմնարկը վերակազմակերպել և անվանափոխել Աբովյան համայնքի «Արամուս գյուղի մարզամշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն):
2. Հաստատել կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն հավելված N 1-ի:
3. Հաստատել կազմակերպության աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված N 2-ի:
4. Սահմանել, որ՝

1) համայնքային սեփականություն հանդիսացող՝ «ՀՀ Կոտայքի մարզի Արամուսի մարզամշակույթային կենտրոն» հիմնարկի վերակազմակերպման պահին նրա տիրապետման տակ գտնվող գույքը՝ իր ամբողջ կազմով և արժեքով, բացառությամբ շենքերի, շինությունների, պատմամշակութային նշանակության ինչպես նաև նվազագույն աշխատավարձի 10000-ապատիկից ավելի արժողությամբ գույքի, օգտագործման իրավունքով հանձնվում է Աբովյան համայնքի «Արամուս գյուղի մարզամշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը, որպես իրավահաջորդի՝ համաձայն հավելված N 3-ի:

2) «ՀՀ Կոտայքի մարզի Արամուսի մարզամշակույթային կենտրոն» հիմնարկի տիրապետման շենքերը, շինությունները, Հողային օրենսգրքով սահմանված կարգով իրենց սպասարկման հողատարածքներով, պատմամշակութային նշանակության ինչպես նաև նվազագույն աշխատավարձի 10000-ապատիկից ավելի արժողությամբ գույքը՝ իր ամբողջ կազմով և արժեքով, Աբովյան համայնքի «Արամուս գյուղի մարզամշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանն ամրացվում են անհատույց օգտագործման իրավունքով՝ դրա նպատակային նշանակությանը համապատասխան օգտագործելու պայմանով՝ Աբովյան համայնքի ղեկավարի հետ կնքված պայմանագրի հիման վրա:

5. Հաստատել «ՀՀ Կոտայքի մարզի Արամուսի մարզամշակույթային կենտրոն» հիմնարկի գույքի, այլ գույքային իրավունքների, ինչպես նաև պարտատերերին և պարտապաններին վերաբերող բոլոր (ներառյալ՝ վիճարկվող) պարտավորությունների Աբովյան համայնքի «Արամուս գյուղի մարզամշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության փոխանցման ակտը՝ համաձայն հավելված N 4-ի:

6. Հանձնարարել կազմակերպության տնօրենին՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում ապահովել վերակազմակերպվող կազմակերպության և կանոնադրության պետական գրանցումը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից, իսկ որոշման 3-րդ կետը ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում կազմակերպության գրանցման պահից:

Կողմ -21 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵԴԱ

ԱՐՋՈՒՄԱՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԲԱԲԱՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ

ԳԱԼՍՏՅԱՆ ԳՈՌ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ՄԵԼԻՆԵ

ԳԵՂԱՄՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՋԱՐԳԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՋԱՐՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԹԵՆԵՔԵՋՅԱՆ ԱՆԻ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԷԴՎԻՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱԻՐԻ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԵ

ՄԵԼԻՔՅԱՆ ՆԱԻՐԱ

ՄԵՂՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՍՊՈՒՐԱԿ

ՊՈՂՈՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՔՈՍԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Է. ԲԱԲԱՅԱՆ**

2023թ. փետրվարի 16
ք. Աբովյան

Հավելված N 1
Աբովյան համայնքի ավագանու
2023 թվականի փետրվարի 16-ի N 12-Ա որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՐԱՄՈՒՍ ԳՅՈՒՂԻ ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ք. Աբովյան - 2023թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Աբովյան համայնքի «Արամուս գյուղի մարզամշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, մարզամշակութային կրթադաստիարակչական ծրագրեր իրականացնող հաստատություն է (այսուհետ՝ հաստատություն):

Հաստատության հիմնադիրն է Աբովյան համայնքը:

Աբովյան համայնքի «Արամուս գյուղի մարզամշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը համարվում է վերակազմակերպված «ՀՀ Կոտայքի մարզի Արամուսի մարզամշակույթային կենտրոն» հիմնարկի (գրանցման համար 42.0145, վկայականի համար Բ004817, գրանցված է 22.05.2000թ.) իրավահաջորդը:

2. Հաստատությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Կրթության մասին», «Մանկապատանեկան սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ (այսուհետ՝ կանոնադրություն):

3. Հաստատության գտնվելու վայրն է՝ 2211, ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Արամուս, Կենտրոնական փողոց 16:

4. Հաստատությունը, որպես սեփականություն, կարող է ունենալ առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Հաստատությունն իր անունից կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

5. Հաստատության անվանումն է՝

1) հայերեն լրիվ՝ Աբովյան համայնքի «Արամուս գյուղի մարզամշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն.

2) հայերեն կրճատ՝ Աբովյան համայնքի «Արամուս գյուղի մարզամշակութային կենտրոն» ՀՈԱԿ.

3) ռուսերեն լրիվ՝ "Спортивно-культурный центр села Арамус" общинная некоммерческая организация Абовянской общины.

4) ռուսերեն կրճատ՝ "Спортивно-культурный центр села Арамус " ОНКО Абовянской общины.

5) անգլերեն լրիվ՝ "Sport and culture center in Aramus village" of Abovyan community on-Profit Communal Organization.

6) անգլերեն կրճատ՝ "Sport and culture center in Aramus village" of Abovyan community NPCO:

6. Հաստատությունը կարող է ունենալ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ: Կնիքը, ձևաթղթերը, խորհրդանիշը և այլ անհատականացման միջոցներ ձևավորելիս, անհրաժեշտության դեպքում, հայերենին կարող են զուգակցվել այլ լեզուներ:

7. Հաստատությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

8. Հաստատությունը կարող է ունենալ հիմնարկներ, մասնաճյուղեր կամ ներկայացուցչություններ: Հիմնարկները, մասնաճյուղերը կամ ներկայացուցչություններն

ստեղծվում են հիմնադրի որոշմամբ, իսկ հիմնադրի կողմից ուղղակիորեն նախատեսված դեպքում՝ լիազորված մարմնի որոշմամբ:
9. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա կրթական մարզական հաստատությունների և կազմակերպությունների հետ:
10. Հաստատությունում չեն թույլատրվում քաղաքական կամ կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

2. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

11. Հաստատության գործունեության առարկան է՝
1) բնակչության մշակութային պահանջմունքների բավարարումը.
2) ոչ նյութական մշակութային ժառանգության ավանդույթների պահպանումը, զարգացումը և տարածումը.
3) հաստատության կրթական գործունեությունը իրականացվում է ի շահ անհատի, հասարակության և պետության.
4) հաստատության գործունեությունը հիմնվում է անձի համակողմանի մշակութային զարգացման, ազգային և համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման, ինքնավարության և կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա.
5) հաստատությունը պատասխանատու է երեխաների կյանքի անվտանգության և առողջության պահպանման համար.
6) հաստատության գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության, հանրամատչելիության, ազգային և համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման, ինքնավարության և կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:
12. Հաստատությունում գործունեության նպատակն է՝
1) խմբակների միջոցով պատանիների և երիտասարդների՝ պարի, երաժշտության, արհեստների, թատերական, նկարչական և այլ ուղղվածության ուսուցման իրականացումը.
2) խմբակների միջոցով մարզական պարապմունքների իրականացումը.
3) տարբեր բնույթի մշակութային միջոցառումների՝ ցուցահանդեսների, մրցույթ, փառատոնների, կինոցուցադրումների կազմակերպումը.
4) ազգային մշակութային արժեքների քարոզումը.
5) երեխաների ստեղծագործական ունակությունների զարգացումը, հոգևոր, գեղագիտական, դաստիարակության ապահովումը.
6) սովորողների հանգստի և ժամանցի կազմակերպումը.
13. Հաստատությունը կարող է զբաղվել հիմնադրի կողմից սահմանված ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակներով՝
1) ճամբարների կազմակերպում.
2) իր գործունեության նպատակին համապատասխան, կարող է իրականացնել վճարովի ուսումնական և մշակութային ծառայություններ՝ հիմնադրի սահմանած կարգով.
3) մշակութային ու մարզական այլ միջոցառումների կազմակերպում:

3. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

14.Հաստատության կառուցվածքում ներառվում են՝
1) երաժշտական բաժինը.
2) գեղարվեստի բաժինը.
3) ժողստեղծագործության խմբակները.
4) մարզական խմբակները.

5) գրադարանը:
15. Խմբակներում ու բաժիններում երեխաների քանակակազմը որոշում է հիմնադիրը:
16. Հաստատությունում ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ից, որի տևողությունը չպետք է պակաս լինի 34 շաբաթից:
17.Հաստատության աշակերտների արձակուրդները հատկացվում են հանրակրթական դպրոցների համար սահմանված արձակուրդների ժամանակացույցով:
18. Ուսումնառությունն ավարտած և համապատասխան գիտելիքներ ստացած սաներին կարող է հանձնվել վկայական՝ հաստատության կողմից սահմանված կարգին համապատասխան:

4.ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

19. Հաստատության կառավարումն իրականացնում է հիմնադիրը՝ նրա լիազորած մարմինը՝ համայնքի ղեկավարը, գործադիր մարմինը՝ հաստատության տնօրենը (այսուհետ՝ տնօրեն):
20. Հաստատության հիմադիրն ունի հաստատության գործունեությանը և կառավարմանը վերաբերվող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:
21.Հաստատության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝
1) հաստատության հիմնադրումը.
2) հաստատության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.
3) հաստատությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը.
4) հաստատության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը.
5) հաստատության կառավարման համակարգի սահմանումը.
6) հաստատության վերակազմակերպումը և լուծարումը.
7) հաստատության լուծարման հանձնաժողովի ստեղծումը.
8) լուծարման հաշվեկշռի հաստատումը.
9) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:
22. Համայնքի ղեկավարը՝
1) իրականացնում է հաստատության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.
2) վերահսկողություն է իրականացնում հաստատության գործունեության նկատմամբ.
3) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում հաստատության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները ու ցուցումները.
4) սահմանում է հաստատության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները.
5) լսում է հաստատության գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները.
6) վերահսկողություն է իրականացնում հաստատությանն ամրացված գույքի օգտագործման և պահպանության նկատմամբ.
7) հաստատության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.
8) հաստատում է հաստատության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը.

9) իրականացնում է հաստատության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:
23. Տնօրենը իրականացնում է հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Հայաստանի Հանրապետության օրենքներով, համայնքի ղեկավարի, ավագանու որոշումներով, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված լիազորությունների սահմաններում, ղեկավարում է հաստատության գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, համայնքի ղեկավարի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:
24.Տնօրենը՝
1) առանց լիազորագրի հանդես է գալիս հաստատության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում է գործարքներ.
2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հաստատության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.
3) տալիս է հաստատության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.
4) աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է հաստատության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.
5) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.
6) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.
7) կատարում է աշխատանքի բաշխում աշխատակիցների միջև.
8) վերահսկողություն է իրականացնում հաստատության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ.
9) ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը.
10) կազմում է հաստատության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում հիմնադրի հաստատմանը.
11) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ:
25. Տնօրենը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:
26. Տնօրենին օրենքով սահմանված կարգով աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է համայքի ղեկավարը:
27. Տնօրենը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով կազմակերպությանը և պետությանը պատճառած վնասի համար: Տնօրենի լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառած վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար:
28. Տնօրենի բացակայության դեպքում, համայնքի ղեկավարի գրավոր կարգադրության համաձայն, նրա լիազորությունները իրականացնում է այլ անձ:
29. Հաստատության փոխտնօրենը (ուսումնական աշխատանքի գծով տեղակալը)՝
1) պատասխանատու է հաստատությունում կրթաստիարակչական գործընթացի կազմակերպման, ուսումնական ծրագրերի իրականացման, դասավանդման որակի և սաների գիտելիքների վերջնարդյունքի համար.
2) վերահսկողություն է իրականացնում կրթադաստիարակչական աշխատանքի ընթացքի, սաների առաջադիմության և վարքի նկատմամբ, կանոնավորում սաների ուսումնական

ծանրաբեռնվածությունը.
3) հաստատությունում կազմակերպում է մեթոդական աշխատանք, կազմում է ուսումնական պարապմունքների դասացուցակ և կրթադաստիարակչական աշխատանքի մասին հաշվետվություններ.
4) ընդհանրացնում և տարածում է լավագույն մանկավարժների աշխատանքի դրական փորձը, մանկավարժներին հաղորդակից է դարձնում գիտության և մանկավարժության նորագույն նվաճումներին.
5) ապահովում է հաստատության և ընտանիքի սերտ կապն ու համագործակցությունը:
30. Խմբակի ղեկավարը, դասատուն, գեղարվեստական ղեկավարը՝
1) կրթադաստիարակչական աշխատանք է կատարում իր խմբակի անդամների շրջանում՝ սերտորեն համագործակցելով մյուս խմբավարների հետ.
2) իրականացնում է խմբակի համար սահմանված գործավարությունը, կազմակերպության տնօրինությանն է ներկայացնում սաների հաճախումների և վարքի մասին տեղեկություններ.
3) կազմակերպում է սովորողների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ, նպատակային էքսկուրսիաներ, շրջագայություններ:

5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻԱՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

31. Հաստատության սեփականությունը ձևավորվում է հաստատության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև հաստատության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:
32. Հաստատությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:
33. Հիմնադիրը սեփականության իրավունքով հաստատությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ հաստատության լուծարումից հետո մնացած գույքի:
34. Հաստատության սեփականության պահպանման հոգսը կրում է հաստատությունը:
35. Հաստատության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում՝ միայն դատական կարգով:
36. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից հաստատության ամրագրված գույքը:
37. Հաստատությունն իրավունք չունի ամրագրված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու: Հաստատության ամրագրված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են: Հաստատության լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է համայնքի ավագանին:
38. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:
39. Հաստատությանը ֆինանսավորում է հիմնադիրը: Հաստատության ֆինանսական միջոցները գոյանում են համայնքի բյուջեից կատարվող հատկացումներից և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:
40. Հաստատության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝
1) վճարովի ծառայությունների մատուցումից ստացված միջոցները.
2) բարեգործական, նպատակային ներդրումները, ծնողական վճարները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված, հաստատության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:
41. Հաստատության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
42. Հաստատության շահույթը նպատակաուղղվում է իր կանոնադրության խնդիրների իրականացմանը նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը, աշխատողների սոցիալական հարցերի բարելավմանը:
43. Հաստատության հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարներ վճարում է ոչ առևտրային կազմակերպությունների համար նախատեսված կարգով ու չափով:

6. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

44. Հաստատությունը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հավելված N 2
Աբովյան համայնքի ավագանու
2023 թվականի փետրվարի 16-ի N 12-Ա
որոշման

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՐԱՄՈՒՍ ԳՅՈՒՂԻ ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատողների քանակը՝ 16

2.Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

հ/հ	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորները	Դրույքի չափը (դրամ)	Ընդամենը աշխատավարձ (դրամ)
1	Տնօրեն	1,0	200 000	200 000
2	Փոխտնօրեն ուսումնական գծով	1,0	135 000	135 000
3	Տնտեսվար	1,0	100 000	100 000
4	Հաշվապահ	1,0	150 000	150 000
5	Գործավար	1,0	95 630	95 630
6	Գրադարանավար	1,0	123 000	123 000
7	Պարուսույց	1,0	95 630	95 630
8	Շվիի դասատու	1,0	95 630	95 630
9	Երգի դասավանդող	1,0	95 630	95 630
10	Ուսուցիչ՝ սոլֆեջո	1,0	95 630	95 630
11	Ուսուցիչ՝ դաշնամուր	4,5	95 630	430 335
12	Վոլեյբոլի մարզիչ	1,0	120 000	120 000
13	Ֆուտբոլի մարզիչ	1,0	95 630	95 630
14	Պահակ	3,0	113 000	339 000
15	Դռնապան	1,0	95 630	95 630
16	Հավաքարար	1,0	115 000	115 000
	Ընդամենը	**21,5**		**2 381 745**

Հավելված N 3
Աբովյան համայնքի ավագանու
2023 թվականի - փետրվարի 16-ի
N 12-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ

« ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՄՈՒՍԻ ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒՅԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱՐԿԻ

ԳՈՒՅՔԻ

Հերթական համար	Անվանում	Չափման միավոր	Քանակ	Համախառն հաշվեկշռային արժեք	Կուտակված մաշվածություն	Հաշվեկշռային արժեք
1	Խաղասարք մանկական ճոճանակ	հատ	1	117 600,00	8 008,00	109 592,00
2	Խաղասարք մանկական ճոճանակ	հատ	1	78 400,00	5 338,66	73 061,34
3	Խաղասարք մանկական սղարան	հատ	1	53 900,00	3 670,34	50 229,66
4	Խաղասարք մանկական պտտվող կարուսել	հատ	1	39 200,00	2 669,33	36 530,67
5	Գրասեղան	հատ	5	9 500,00	8 086,30	1 413,70
6	Սեղան խորհրդակցական	հատ	1	9 500,00	8 086,31	1 413,69
7	Լրագրասեղան	հատ	1	14 250,00	4 043,15	10 206,85
8	Բազմոց	հատ	1	39 200,00	7 414,82	31 785,18
9	Բազկաթոռ	հատ	2	39 200,00	7 414,82	31 785,18
10	Պահարան մետաղական	հատ	2	28 500,00	24 258,92	4 241,08
11	Պահարան մետաղական	հատ	1	10 450,00	8 894,94	1 555,06
12	Կախիչ	հատ	1	4 750,00	4 043,15	706,85
13	Համակարգիչ Intel Core G3900	հատ	1	83 300,00	47 269,45	36 030,55
14	Մոնիտոր Asus VP228	հատ	1	54 057,10	10 618,36	43 438,74
15	Հեռուստացույց Hisense	հատ	1	118 800,00	25 280,36	93 519,64
16	Հեռուստացույց JVC	հատ	1	4 900,00	4 900,00	0,00
17	Սառնարան Hisense	հատ	1	53 900,00	18 984,48	34 915,52
18	Ջերմաչափ ինֆրակարմիր Big Healthy	հատ	1	19 800,00	1 982,77	17 817,23
19	Բարձրախոս	հատ	2	53 200,00	31 188,90	23 011,10
20	Խոսափող	հատ	3	14 700,00	1 501,50	13 198,50
21	Նվագարկիչ Samsung DVD-277	հատ	1	6 370,00	2 243,62	4 126,38
22	Վարժասարք Green Hill	հատ	1	19 600,00	6 903,45	12 696,55

23	Վարժասարք-վազքուղի RS Power	հատ	1	19 600,00	6 903,45	12 696,55
24	Սեղան-նստարան աշակերտական	հատ	6	0,60	0,60	0,00
25	Սեղան-նստարան աշակերտական	հատ	7	23 275,00	19 811,47	3 463,53
26	Աթոռ փայտե	հատ	3	5 700,00	1 617,27	4 082,73
27	Գրասեղան	հատ	6	11 400,00	9 703,56	1 696,44
28	Գրապահարան	հատ	14	66 500,00	56 604,10	9 895,90
29	Գրասեղան	հատ	1	1 900,00	1 617,26	282,74
30	Դարակաշար մետաղական	հատ	48	319 200,00	271 699,68	47 500,32
31	Սեղան մանկական	հատ	10	9 500,00	8 086,30	1 413,70
32	Քարտադարակ	հատ	1	4 750,00	4 043,15	706,85
33	Գրականություն	հատ	8039	1 909 262,50	812 573,02	1 096 689,48
34	Ռոյալ ,,Գերբշտատ,,	հատ	1	550 000,00	0,00	550 000,00
35	Դաշնամուր ,, Կրասնի Օկտյաբր,,	հատ	1	114 000,00	0,00	114 000,00
36	Դաշնամուր ,, Կոմիտաս,,	հատ	3	325 980,00	0,00	325 980,00
37	Դաշնամուր ,, Ռոյսլերն,,	հատ	1	212 000,00	0,00	212 000,00
38	Թաթերական աթոռներ /4 տեղանոց/	հատ	4	240 000,00	0,00	240 000,00
39	Գազի կաթսա ,,Մերկուրի,,	հատ	2	0,00	0,00	0,00
40	Գազի կաթսա ,, Սկյուռել,,	հատ	1	0,00	0,00	0,00
41	Աթոռ կիսափափուկ	հատ	34	0,00	0,00	0,00
Ընդամենը				**4 686 145,20**	**1 435 461,49**	**3 251 683,71**

Հավելված N 4
Աբովյան համայնքի ավագանու
2023 թվականի փետրվարի 16-ի N 12-Ա որոշման

«ՀՀ Կոտայքի մարզի Արամուսի մարզամշակույթային կենտրոն» հիմնարկի գույքի, այլ գույքային իրավունքների, ինչպես նաև պարտատերերին և պարտապաններին վերաբերող բոլոր (ներառյալ՝ վիճարկվող) պարտավորությունների Աբովյան համայնքի «Արամուսի մարզամշակութային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը

ՓՈԽԱՆՑՄԱՆ ԱԿՏ

1. Աբովյան համայնքի «Արամուսի մարզամշակութային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համարը՝ ----------) հանդիսանում է «ՀՀ Կոտայքի մարզի Արամուսի մարզամշակույթային կենտրոն» հիմնարկի (գրանցված է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 22.05.2000 թ., պետական գրանցման համարը՝ 42.0145, հարկ վճարողի հաշվառման համար՝(03521385) իրավահաջորդը, որին փոխանցվում են «ՀՀ Կոտայքի մարզի Արամուսի մարզամշակույթային կենտրոն» հիմնարկին պատկանող և սույն փոխանցման ակտում նշված ակտիվները և պասիվները, այլ իրավունքներն ու պարտավորությունները:

2. Աբովյան համայնքի «Արամուսի մարզամշակութային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանն են փոխանցվում «ՀՀ Կոտայքի մարզի Արամուսի մարզամշակույթային կենտրոն» հիմնարկի հաշվեկշռում ընդգրկված ակտիվները և պասիվները հետևյալ հիմնական ցուցանիշներով (---------- թ. դրությամբ, հազար դրամ).

Հ/Հ	ՑՈՒՑԱՆԻՇԸ	ԱԿՏԻՎ	ՊԱՍԻՎ	ԾԱՆՈԹ.
1.	Հիմնական միջոցներ (անշարժ գույք), այդ թվում՝ • շենք-շինություն • հողամաս	244246484.79 16038797	- - -	Կետ 2 - Կետ 3
2.	Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ	0	-	-
3.	Ոչ նյութական ակտիվներ	0	-	-
4.	Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	3251683.71	-	-
5.	Նյութեր	0	0	-
6.	Արագամաշ առարկաներ	0	0	-
7.	Ոչ ընթացիկ պարտավորություններ	-	0	-
8.	Ակտիվներին վերաբերող շնորհներ (հողամասի արժեք)	-	-	-
9.	Ընթացիկ պարտավորություններ, այդ թվում՝ • հաշվարկներ վաճառքների (գնումների) գծով • հաշվարկներ կանխավճարների գծով	0 0 0	- 0 0	- - -

	• հաշվարկներ բյուջեի գծով • հաշվ. աշխատավարձի վճարման գծով, որից՝ • այլ պարտքեր և պարտավորություններ	0 0 0	0 0 0	- - -
	ՀԱՇՎԵԿՇԻՌ	263536956.50	0	-

3. Աբովյան համայնքի «Արամուսի մարզամշակութային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանն է փոխանցվում «ՀՀ Կոտայքի մարզի Արամուսի մարզամշակույթային կենտրոն» հիմնարկին օգտագործման իրավունքով պատկանող ՀՀ, Կոտայքի մարզ, գյուղ Արամուս, Կենտրոնական փողոց՝ 16 հասցեում գտնվող 2523,8 քառ. մ. մակերեսով շենքը (կադաստրային ծածկագիրը՝ 07-013-032--032),

4.Աբովյան համայնքի «Արամուսի մարզամշակութային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանն են փոխանցվում «ՀՀ Կոտայքի մարզի Արամուսի մարզամշակույթային կենտրոն» հիմնարկի պահպանման ենթակա փաստաթղթերը:

5.«ՀՀ Կոտայքի մարզի Արամուսի մարզամշակույթային կենտրոն» հիմնարկը չունի այլ ակտիվներ և պասիվներ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 փետրվարի 2023 թվականի N 13-Ա

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-րդ կետի և 82.1-րդ հոդվածի, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Աբովյան համայնքի 2023 թվականի տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -13	Դեմ -7	Ձեռնպահ -0
ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵԴԱ	ԱՌԱՔԵԼՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ	
ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ	ԳԱՍՊԱՐՅԱՆ ՄԵԼԻՆԵ	
ԲԱԲԱՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ	ԳԵՂԱՄՅԱՆ ՏԻԳՐԱՆ	
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ	ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱԻՐԻ	
ԶԱՐԳԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ	ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ	
ԶԱՐՈՅԱՆ ԴԱՎԻԹ	ՄԵԼԻՔՅԱՆ ՆԱԻՐԱ	
ԹԵՆԵՔԵՋՅԱՆ ԱՆԻ	ՊՈՂՈՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ	
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ		
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԷԴՎԻՆ		
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԵ		
ՄԵՂՐՅԱՆ ԱՐՄԱՆ		
ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՍՊՈՒՐԱԿ		
ՔՈՍԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Է. ԲԱԲԱՅԱՆ**

2023թ. փետրվարի 16
ք. Աբովյան

Հավելված
Աբովյան համայնքի ավագանու
2023 թվականի փետրվարի 16-ի
№ 13-Ա որոշման

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ



Ներկայացվել է՝ համայնքի ղեկավար Էդուարդ Բաբայանի կողմից

ԱԲՈՎՅԱՆ 2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԳԼՈՒԽ 1. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ ԵՎ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ..... 5

ԳԼՈՒԽ 2. ՀԱՄԱՅՆՔԻ 2023 Թ. ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՆՔԵՐԸ (ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ) 10

2.1 ՏԱՊ-ՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՆՔԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՆԵՐԻ..... 12

ԳԼՈՒԽ 3. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2023 Թ. ԾՐԱԳԻՐԸ 65

ԳԼՈՒԽ 4. ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՊ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՊԼԱՆԸ 68

ԳԼՈՒԽ 5. ՀԱՄԱՅՆՔԻ 2023 Թ. ՏԱՊ-Ի ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԼԱՆԸ 71

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Համայնքի տարեկան աշխատանքային պլանը (այսուհետ՝ ՏԱՊ) համայնքում առկա ֆինանսական, վարչական, մարդկային և սոցիալական ռեսուրսները կառավարելու գործիք է, այն փաստաթուղթ է, ուր հստակորեն ներկայացվում են սոցիալական, տնտեսական, մարդկային, բնական և այլ ռեսուրսների ներդրման միջոցով համայնքի զարգացմանն ուղղված՝ 2023թ. համար համայնքի ռազմավարությունը, ծրագրերը և միջոցառումները:

Աբովյան համայնքի ՏԱՊ-ը մշակվել է հետևյալ հիմնական նպատակներով՝

- ✓ համակարգել համայնքի 2023թ. անելիքները,
- ✓ սահմանել սոցիալ-տնտեսական զարգացման առաջնահերթությունները, գնահատել համայնքի ներքին ռեսուրսները, հաշվառել համայնքում ներդրվող արտաքին ռեսուրսները, հաշվարկել համախառն ռեսուրսները և բացահայտել պակասուրդը (դեֆիցիտը),
- ✓ համախմբել համայնքի հնգամյա զարգացման ծրագրով (այսուհետ՝ ՀՀԶԾ) համայնքում 2023թ. համար նախատեսվող բոլոր ծրագրերը և միջոցառումները՝ համայնքի տեսլականի և հիմնական նպատակների իրականացման շուրջ,
- ✓ շաղկապել նախատեսվող ծրագրերը և միջոցառումները դրանց իրականացման արդյունքների հետ՝ կիրառելով ՀՀԶԾ-ի ոլորտային ծրագրի «Տրամաբանական հենքը»,
- ✓ որոշակիացնել նախատեսվող ծրագրերի և միջոցառումների իրականացման ֆինանսական աղբյուրները և միջոցները, պատասխանատուները և ժամկետները, մշակել տվյալ տարվա ՏԱՊ-ի իրականացման մոնիթորինգի և գնահատման պլանը /ՄԳՊ/:

Համայնքի տարեկան աշխատանքային պլանը ռազմավարական մոտեցումների և ընդհանուր գործողությունների միջոցով համայնքի առջև դրված նպատակներին հասնելու մեթոդն է: ՏԱՊ-ի միջոցով սահմանվում է գործողությունների՝ տարրերի համահունչ մի շարք, որոնք միտված կլինեն գալիք տարում մեր առջև դրված խնդիրների առավել արդյունավետ լուծմանը:

Աբովյան համայնքի 2023թ. տարեկան աշխատանքային պլանը բաղկացած է 5 գլուխներից.

1-ին գլխում սահմանվում է համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները:

2-րդ գլխում ներկայացվում է համայնքի 2023 թվականի ծրագրերի ցանկը և տրամաբանական հենքերը (ըստ ոլորտների):

3-րդ գլխում ներկայացվում է համայնքային գույքի կառավարման 2023 թվականի ծրագիրը:

4-րդ գլխում ներկայացվում է համայնքի ՏԱՊ-ի ֆինանսավորման պլանը:

5-րդ գլխում ներկայացվում է համայնքի ՏԱՊ-ի մոնիթորինգի և գնահատման պլանը:

ԳԼՈՒԽ 1. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ ԵՎ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Աբովյան համայնքի տարածքային և տնտեսական զարգացման գործում կարևոր է հաշվի առնել համայնքի բնակչության հեռանկարային աճը: Բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, համայնքը դարձնել բարեկեցիկ և մրցունակ մյուս համայնքների նկատմամբ:

Համայնքի սահմանված տեսլականին հասնելու համար համայնքի ռազմավարությունն է՝

. Բարելավել համայնքի ֆինանսական դրությունը՝ իրականացնելով համայնքի բյուջեի հարկային եկամուտների գանձման, ոչ հարկային եկամուտների, տեղական տուրքերի ու վճարների սահմանման և գանձման արդյունավետ քաղաքականություններ,

. Խթանել ձեռներեցությունը՝ այն սերտորեն կապելով համայնքի տնտեսական զարգացման հետ,

. Պահպանել համայնքի ճարտարապետության արդի ոճը, բացառել ինքնակամ շինարարությունը և ապօրինի հողազավթումները,

. Խթանել համայնքային տարբեր շահագրգիռ կողմերի, դոնոր կազմակերպությունների, հասարակական և բարեգործական կազմակերպությունների, անհատների նախաձեռնությունները և նրանց ներգրավմամբ հետևողականորեն իրականացնել բարեփոխումներ՝ նպաստելով համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը,

. Սերտորեն համագործակցել համայնքի բնակչության, քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների և գործարարների հետ,

. Նպաստել համայնքում աշխատատեղերի ընդլայնմանը՝ ռացիոնալ օգտագործելով բնական ռեսուրսները, զարգացնելով առևտրի և սպասարկման ոլորտը: Բարձրացնել բնակչության կենսամակարդակը՝ ընդլայնելով մատուցվող հանրային ծառայությունների որակն ու շրջանակը:

Զարգացման հիմնական ուղղությունների իրականացման գործընթացում խիստ կարևորվում է տեղական իշխանությունների, համայնքի բնակչության, քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների և գործարարների համատեղ գործունեությունը, ինչպես նաև համագործակցությունը պետական կառավարման մարմինների և դոնոր կազմակերպությունների հետ:

Աղյուսակ 1.Համայնքի կայուն զարգացման ցուցանիշները

Ցուցանիշ	Ելակետային արժեք	Թիրախ ային արժեք
Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռն ընդհանուր եկամուտների մեջ (%)	45.8	65
Բնակչության զբաղվածության աճ	1.2 %	1.5 %
Համայնքում հաշվառված բնակիչների ընդհանուր թիվը (մարդ)	88211[1]	89000
Համայնքում հաշվառված նպաստառուների թիվը.[2] Ընտանեկան նպաստառուներ՝ Սոցիալական նպաստառուներ՝	1781 819	1700 750
Գրանցված գործազուրկների թիվը՝[3]	1119	1000
Գրանցված գործազուրկների մեծամասնությունը ըստ տարիքային խմբի՝ 35-44	354	200

Աղյուսակ 2.Համայնքի ոլորտային նպատակները

Ոլորտային նպատակ	Վերջնական արդյունքի՝		
	Ցուցանիշ	Ելակետ ային արժեք	Թիրա խային արժեք
ԸՆԴՀԱՆՈՒՐ			
Ապահովել համայնքային ծառայությունների ընթացիկ մակարդակի պահպանումը, թափանցիկ, լիրաժեք և արդյունավետ կառավարումը, քաղաքացիներին որակյալ ծառայությունների մատուցումը	Համայնքի (հաշվառված) բնակիչների թվի փոփոխությունը նախորդ տարվա համեմատ, %	1,2	1,3
